Հաշվետվություն

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության 2024 թվականի ընթացքում կատարած աշխատանքների

/ԿՐԹՈՒԹՅՈՒՆ/

ՀՀ Շիրակի մարզում գործում են 159 հանրակրթական դպրոցներ, որոնցից 145-ը մարզային ենթակայության, 11-ը՝ ՀՀ ԿԳՄՍՆ և 3-ը ոչ պետական:

Աշակերտների թիվ.

- ***Ընդհանուր թիվ***

01/01/2024թ. -31989, որից մարզային ենթակայության 27812 աշակերտ:

- ***1-ին դասարանցիներ.***

01/01/2024թ.-2830 աշակերտ, որից մարզային ենթակայության 2775 աշակերտ:

- ***Ներառական աշակերտներ.***

01/01/2024թ.-722 աշակերտ որից մարզային ենթակայության 691 աշակերտ

- ***Նախակրթարանի սաներ.***

Գործում են դպրոցահեն 73 նախակրթարաններ.

01/01/2023թ.- 659 սան, որից մարզային ենթակայության 647 սան,

- ***Կամավոր ատեստավորում.***

2024 թվական -295 ուսուցիչներ

- ***Երթևեկողներ.***

Ուսուցիչ՝ 841 , Աշակերտ՝ 108:

- 2024 թվականին 7-13 տարեկան 380 աշակերտ՝ Զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների և բազմազավակ ընտանիքների, մեկնել են Հանքավանի «Արագած» ճամբար՝ ամառային հանգստի:
- Մարզի 138 դպրոցներում գործում է Արմաթ ինժեներական լաբորատորիաներ
- 2024 թվականին շրջանավարտների թիվը կազմել է 1595 աշակերտ, որից 785-ը մարզային ենթակայության ուսումնական հաստատությունների դպրոցներից /հունվարի 1-ի դրությամբ/: ԲՈՒՀ – երի ընդունելության հայտագրվել է՝ 1341 դիմորդ, ընդունվել՝ 1019-ը /77,4%/, որոնցից 264-ը /25,9%/՝ առաջին անվճար հայտով /2024 թվականի հունիս/:
- 2024 թվականին դպրոցականների առարկայական օլիմպիադաների տարածքային փուլերին մասնակցել են 3136 աշակերտներ, մարզային փուլին՝ 502 և հանրապետական փուլին՝ 113:

1-ին կարգի դիպլոմ՝ 8,
2-րդ կարգի դիպլոմ՝ 3,
3-րդ կարգի դիպլոմ՝ 16,
Գովասանագիր՝ 23:

- Մարզային ենթակայության թվով 42 դպրոցներում տեղադրված են ֆոտովոլտային /արևային/ մարտկոցներ:

/ՄՇԱԿՈՒՅԹ/

ՀՀ Շիրակի մարզի մշակույթի ոլորտում 2024 թվականին իրականացված ծրագրերը նպատակ են ունեցել բարձրացնելու մշակույթի դերն ու պահպանելու ազգային մշակութային արժեքները:

Հաշվետու ժամանակահատվածում /01.01.2024-30.12.2024/ *իրականացվել* է պետական մշակութային քաղաքականությունը ՀՀ Շիրակի մարզում, մարզպետի որոշումների կատարման նկատմամբ վերահսկողությունը:

Համակարգվել է ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող 5 /«Գյումրու ժող. գործիքների նվագախումբ», «Գյումրու սիմֆոնիկ նվագախումբ», «Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան», «Շիրակի երկրագիտական թանգարան» և «Ամասիայի մանկական արվեստի դպրոց»/ մշակութային հաստատությունների գործունեությունը, ինչպես նաև մարզի համայնքներում իրականացվել են պետական, ազգային և այլ տոների, հոբելյանների և հիշատակի օրերի հետ կապված զանգվածային միջոցառումներ:

Իրականացվել են մարզի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանության և օգտագործման նկատմամբ օրենքով սահմանված լիազորություններ, մշակույթի բնագավառում վարչական հսկողություն է իրականացվել ՀՀ Շիրակի մարզի Աշոցք /03.06.2024-07.06.2024/, Ախուրյան /16.09.2024-20.09.2024/, Անի /02.12.2024-06.12.2024/ համայնքներում:

Վերահսկողություն է իրականացվել ՝

- Գեղարվեստական կրթության որակի բարձրացման, ազգային, լարային, փողային նվագարանների ուսուցման գծով վարձավճարների փոխհատուցման աշխատանքների կազմակերպման ուղղությամբ,
- Մարզի տարածքում հուշարձանների պահպանության և օգտագործման մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ, *միջոցներ ձեռնարկվել* մարզի տարածքում հուշարձանների պահպանության և օգտագործման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում մարզի նվագախմբերի կողմից, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններում, արվեստի, նկարչական և գեղարվեստի դպրոցներում, ինչպես նաև մշակութային արտադպրոցական կենտրոններում առանձնահատուկ հանդիսավորությամբ անց են կացվել Շարլ Ազնավուրի, Պարույր Սևակի և Սերգեյ Փարաջանովի 100-ամյա հոբելյաններին նվիրված միջոցառումներ՝ համերգներ, ասմունքի երեկոներ, նկարչական մրցույթներ, բացվել ցուցահանդեսներ:

Գյումրու սիմֆոնիկ նվագախումբը հանդես է եկել մի շարք համերգներով՝ նվիրված «Ֆրանկոֆոնիայի օրեր»-ին, «Արտ շաբաթ» և «Մենակատարների շքերթ» փոքրիկ երաժիշտների մասնակցությամբ ծրագրերի շրջանակում, Եվրոպական ժառանգության օրերին նվիրված «Ճանապարհներ, ցանցեր, կապեր» խորագրով ծրագրի շրջանակներում, Գյումրու ժող. գործիքների պետական նվագախումբը հանդես է եկել «Ակունքներ» ծրագրի շրջանակներում իրականացված ազգային երաժշտության համերգներով, «Երգում է հայ կինոն» խորագրով հայ կինոյի 100-ամյակին, Հայ մեծանուն շանսոնյե Շառլ Ազնավուրի 100-ամյակին նվիրված տարվա ընթացքում հանդես է եկել մի շարք համերգներով, Սարդարապատի հուշահամալիր, Հայոց ազգագրության թանգարանում «Հայկական դուդուկի կանչը» փառատոնի շրջանակներում հանդես եկել համերգային ծրագրով:

Տարվա ընթացքում պարբերաբար աջակցություն է ցուցաբերվել պետական ծրագրերով նախատեսված միջոցառումների տարածաշրջանային և մարզային փուլերի կազմակերպմանն ու անցկացմանը, հանրապետական եզրափակիչ փուլերին մարզի ներկայացուցիչների մասնակցության ապահովմանը:

Գյումրու «Ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» ՊՈԱԿ-ում ապրիլի 18-ին Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվա շրջանակներում կազմակերպվել են թանգարանի տարածքի մաքրման, ծառատունկի աշխատանքներ և անցկացվել միջոցառում:

Ապրիլի 29-ին Քաղաքացու օրվա կապակցությամբ կրթական և մշակութային հաստատություններում կազմակերպվել են մշակութային և քաղաքական ականավոր ներկայացուցիչների հետ հանդիպում-զրույցներ:

Մայիսի 18-ին ՀՀ Շիրակի մարզի թանգարաններում «Թանգարանների միջազգային օր» և «Թանգարանների գիշեր» ակցիայի շրջանակներում «Թանգարաններ, կրթություն և հետազոտություն» խորագրի ներքո կազմակերպվել և անց են կացվել մի շարք միջոցառումներ:

Մայիսի 27-28-ը ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, մարզպետների աշխատակազմերի և համայնքապետարանների աջակցությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի կողմից Երևանի Խաչքարերի պուրակում անցկացրած ներքին զբոսաշրջային ցուցահանդեսին մարզի համայքներն հանդես են եկել համայնքային մշակույթի հարուստ պոտենցիալի ցուցադրմամբ:

Մայիսին մեծ հանդիսավորությամբ կազմակերպվել և անց է կացվել Գյումրու թատերական փառատոնը:

Հուլիսի 5-ին մարզի գրեթե բոլոր համայնքներում անց են կացվել ՀՀ սահմանադրության օրվան և պետական խորհրդանիշերի հանրահռչակմանը նվիրված միջոցառումներ՝ տոնական քայլերթ և համերգ, որին մասնակցել են մարզի ԲՈՒՀ-երի ուսանողները:

Սեպտեմբերի 7-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության պետական կոմիտեի, ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, մարզպետների աշխատակազմերի և համայնքապետարանների աջակցությամբ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում «MEDIA ONIX» Մշակույթի և տուրիզմի պրոպագանդման ընկերության կողմից անցկացված «Արվեստների և արհեստների» համահայկական փառատոնին ՀՀ Շիրակի մարզի համայնքները հանդես են եկել մշակութային տարբեր ուղղությունների ներկայացմամբ:

Սեպտեմբերի 14-15-ը ՀՀ Շիրակի մարզի մշակութային օջախները միացել են «Ճանապարհներ, ցանցեր, կապեր» համաեվրոպական խորագրի ներքո Հայաստանի Հանրապետությունում անցկացված Եվրոպական ժառանգության օրերի միջոցառումների շարքին:

Սեպտեմբերի 21-ին մարզում կազմակերպվել և մեծ շուքով անց են կացվել ՀՀ Անկախության տոնին նվիրված համապետական միջոցառումների շարքում ընդգրկված բազում միջոցառումներ:

Մարզի տարբեր հաստատություններում գործող թատերախմբերը մասնակցել են «Նռան հատիկ-2024» հանրապետական մանկապատանեկան թատերական 24-րդ փառատոնին:

Մարզում գործող մշակութային հաստատությունների ներգրավմամբ 2024 թվականին *շարունակվել է* դեռևս 2018 թվականի նոյեմբերին մեկնարկած դպրոցական բաժանորդային ծրագիրը: Մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորող թվով 32339 աշակերտի տրամադրվել է անվանական 1 աբոնեմենտ՝ անվճար երկու մշակութային հաստատություն (թանգարան կամ պատկերասրահ, թատրոն կամ համերգասրահ) մեկ անգամ մուտք գործելու համար:

Հաշվետու ժամանակահատվածում դպրոցական բաժանորդային ծրագրում ընդգրկված մարզի մշակութային հաստատություններն աբոնեմենտային տոմսերով սպասարկել են հանրապետության ողջ տարածքից մարզ այցելող **38778** աշակերտ և ուսուցիչ:

Դպրոցական բաժանորդային ծրագրի շրջանակներում Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող մշակութային հաստատություններն աբոնեմենտային տոմսերով սպասարկել են հանրապետության ողջ տարածքից մարզ այցելող **6296** աշակերտ և ուսուցիչ՝

- Գյումրու սիմֆոնիկ նվագախումբը՝ **1274** հանդիսատես,
- Գյումրու ժող.գործիքների նվագախումբը՝ **2208** հանդիսատես,
- Գյումրու ժող. ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարանը՝ **2814** այցելու:

Կազմակերպվել է ՀՀ պետական բյուջեից երաժշտական և արվեստի դպրոցների ազգային, լարային և փողային բաժիններում սովորողների ուսման վարձավճարի փոխհատուցման պետական ծրագրի շրջանակներում թվով 16 երաժշտական և արվեստի դպրոցների և 2 մարզամշակութային կենտրոնի ազգային, լարային, փողային նվագարարնների ուսուցման բաժիններում սովորող 193 աշակերտի ուսման վարձավճարի և 2023-2024 թվականներին կամավոր ատեստավորում անցած պետական կամ համայնքային կազմակերպությունների արտադպրոցական ծրագրեր իրականացնող Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրավճար ստացող թվով 9 մանկավարժական աշխատողի հավելավճարի փոխհատուցման գործընթացը:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող՝

- Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան.

Անց են կացվել բազմաբնույթ միջոցառումներ, այդ թվում 6 ցուցահանդես:

Թանգարանը ունեցել է ընդհանուր **21309** այցելու, որից **2814**–ը դպրոցական բաժանորդային ծրագրով, **8478**-ը անվճար, **6908**-ը վճարովի, տարվել է **2313** էքսկուրսիա:

- Գյումրու սիմֆոնիկ նվագախումբ.

Կազմակերպել է **31** համերգ՝ **10694** հանդիսականով, որից **1274**-ը դպրոցական բաժանորդային ծրագրով:

- Գյումրու ժողովրդական գործիքների նվագախումբ.

Կազմակերպել է 56 համերգ՝ **16347** հանդիսականով, որից **2208**-ը դպրոցական բաժանորդային ծրագրով:

- Շիրակի երկրագիտական թանգարան.

✓ Շիրակի երկրագիտական թանգարանի գործունեությունը հիմնականում շարունակվել է հետևյալ ուղղություններով՝ հնագիտական դաշտային ուսումնասիրություններ, (հետագայում նաև լաբորատոր հետազոտություններ), ֆոնդային աշխատանքներ, գիտաժողովներ, ցուցահանդեսներ, հրատարակություններ:

✓ 2023-24 թվականների հնագիտական պեղումներից հայտնաբերված խեցեղեն գտածոների մաքրման, վերականգման աշխատանքներ, հայտնաբերված նյութերի գիտական ուսումնասիրություն և կամերալ մշակում: Պատրաստվել են նյութերի գրչանկարներ և տախտակներ: Կազմակերպվել են հայտնաբերված թրծակավե ցուցանմուշների վերականգնման աշխատանքներ:

✓ Կատարվել են թանգարանի ֆոնդերում պահպանվող լուսանկարների, փաստաթղթերի, աշխատանքային ինչպես նաև երաժշտական գործիքների վերահաշվարկման, դասդասման, համարակալման, լուսանկարման և թվայնացման աշխատանքներ:

✓ Իրականացվել է՝ 2010, 2012, 2013, 2014, 2015, 2018, 2022 թվականների Բենիամինի, Ազատանի, Ջրափիի, Մեծ Սեպասարի հուշարձանների պեղումների ընթացքում հայտնաբերված գտածոների (մետաղ, քար, խեցեղեն) մանրամասն նկարագրություն, համարակալում և գլխավոր գույքամատյանի լրացում:

✓ Շարունակվել են էլեկտրոնային շտեմարանում թանգարանի ֆոնդերում պահպանվող նմուշների մուտքագրում: Շտեմարանը համալրվել է շուրջ 8000 նոր արժեքներով: Էլեկտրոնային շտեմարան մուտքագրված արժեքների ընդհանուր թիվն այս պահին շուրջ 24000 է:

✓ Թանգարանի գիտական անձնակազմը աշխատել է Բենիամինի, Ազատանի, Զրաձորի և Զրափիի 2022 թվականի հնագիտական պեղումների արդյունքների գիտական հաշվետվությունների և Շիրակի մարզի ազգագրական ուսումնասիրությունների հոդվածների նախապատրաստման ուղղությամբ:

✓ Շարունակվել են 2017 թվականի Զրաձորի հուշարձանի պեղումների ընթացքում հայտնաբերված գտածոների (մետաղ, քար, խեցեղեն) դասդասում, մանրամասն նկարագրության, համարակալման, անձնագրերի ստեղծման աշխատանքները:

• Կազմակերպվել է Ամասիայի մանկական արվեստի դպրոցի բնականոն գործունեությունը: Ամասիայի մանկական արվեստի դպրոցը տարվա ընթացքում իրականացրել է դպրոց հաճախող 120 սաների գեղարվեստական դաստիարակությունը, դպրոցի աշակերկտները մասնակցել են մարզային և հանրապետական միջոցառումների, մրցույթների ու փառատոների, զբաղեցրել պատվավոր տեղեր, հանդես եկել ցուցահանդեսներով, հաշվետու և հոբելյանական համերգներով:

/ՍՊՈՐՏ/

Ապահովել է սպորտային պետական քաղաքականության իրականացումը մարզում: Հսկողություն է սահմանվել մարզի տարածքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի

պետական ծրագրերի իրագործման ուղղությամբ: Իրականացվել են ՀՀ Շիրակի մարզպետին և մարզպետի աշխատակազմին հասցեագրված գրությունների, դիմումների, առաջարկությունների քննարկման և ուսումնասիրման աշխատանքներ: Մասնակցություն է ցուցաբերվել մարզի տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության գործընթացներին:

Հնարավոր աջակցություն է ցուցաբերվել մարզաձևերի ֆեդերացիաներին, համայնքապետարաններին, մարզական ու ուսումնական հաստատություններին՝ առաջնություններ, մրցաշարեր, սպորտլանդիաներ, մարզական տոնահանդեսներ, ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումներ կազմակերպելու և անցկացնելու համար: Համակարգվել է Շիրակի մարզում գործող՝ պետական և համայնքային բյուջեներից սնվող 38 մարզական կազմակերպությունների՝ 1 քոլեջ, 30 մարզադպրոց, 3 մասնաճյուղ, 4 բաժանմունք գործունեությունը, որոնցում հաշվառված են եղել 7429 պարապող և 491 մարզիչ-մանկավարժ: ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործել է 1 մարզական կազմակերպություն՝ «Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոց» ՊՈԱԿ-ը/250 պարապող և 14 մարզիչ-մանկավարժ/:

❖ Կազմակերպվել և անց են կացվել պետական ծրագրերով իրականացվող մարզական զանգվածային միջոցառումների համայնքային և մարզային փուլերն ու ապահովել են Շիրակի մարզը ներկայացնող թիմերի պատշաճ մասնակցությունը միջմարզային և հանրապետական եզրափակիչ փուլերի մրցումներին:

Աղյուսակ N 1՝ Մարզական-զանգվածային միջոցառումներ

N	Միջոցառման անվանումը	Մասնակիցների թիվը՝ ըստ փուլերի				Հանրապետական փուլում նվաճած մեդալների քանակը			
		համայն-քային	մար-զային	մ/մարզ.և հանրապ.	Ընդա-մենը	1	2	3	ընդ
1	«ՀՀ Վարչապետի գավաթ» սիրողական մրցաշարեր	424	675	189	1288	5	5	5	15
2	«ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադա»	452	412	87	951	5	1	3	9
3	«ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների աշակերտների միջև Սպորտլանդիա միջոցառում»	660	240	20	920	-	-	-	-
4	«Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության ռազմամարզական խաղեր»	702	54	9	765	1	1	-	2
5	ՀՀ դպրոցականների 18-րդ օլիմպիադա	388	32	4	424	3	-	-	3
6	ՀՀ Ազգային ժողովի գավաթի	780	72	12	864	Դեռևս չի անցկացվել			

	խաղարկություն								
ԸՆԴԱՄԵՆԸ		**3406**	**1485**	**321**	**5212**	**14**	**7**	**8**	**29**

❖ Հնարավոր աջակցություն է ցուցաբերվել մարզի, համայնքների և մարզական կազմակերպությունների թիմերին՝ ՀՀ պաշտոնական առաջնություններին նախապատրաստվելու և մասնակցելու գործընթացներում.

Աղյուսակ N 2՝ ՀՀ պաշտոնական առաջնություններում Շիրակի մարզի թիմերի ձեռքբերումները 13.12.2024 թվականի դրությամբ

N	Միջոցառման անվանումը	Մրցումների քանակ	1	2	3	Ընդ.
1	ՀՀ մեծահասակների առաջնություն	23	49	35	53	**137**
2	ՀՀ երիտասարդների առաջնություն	9	19	15	26	**60**
3	ՀՀ պատանիների առաջնություն	20	40	46	45	**131**
4	ՀՀ դեռահասների առաջնություն	4	16	10	19	**45**
ԸՆԴԱՄԵՆԸ		**56**	**124**	**106**	**143**	**373**

Ծանոթություն. Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոցի սաները նվաճել են 10-ը մեդալ, որից 3՝ ոսկի, 4՝ արծաթ և 3՝ բրոնզ: Ծանրամարտի ՀՀ առաջնություններ չեն անցկացվել:

❖ Օլիմպիական մարզաձևերից, շախմատից ու սամբոյից միջազգային պաշտոնական առաջնություններում՝ ՀՀ հավաքական թիմերի կազմերում հանդես եկած Շիրակի մարզի մարզիկների մասնակցության և ձեռքբերումների ընդհանուր պատկերը.

Աղյուսակ N 3՝ Միջազգային պաշտոնական առաջնություններ

N	Միջոցառման անվանումը	Միջոցառ. քանակ	Մասնա-կից թիվ	1	2	3	Ընդ.
1	Ամառային 33-րդ օլիմպիական խաղեր	1	5	-	2	-	2
2	Պարաօլիմպիկ խաղեր	1	1	-	-	-	-
3	Ձմեռային պատանեկան 3-րդ օլիմպ. խաղեր	1	2	-	-	-	-
4	Աշխարհի առաջնություն	5	11	1	-	1	2
5	Աշխարհի U 23 առաջնություն	2	3	-	-	-	-
6	Աշխարհի երիտասարդական առաջնություն	4	13	1	-	4	5
7	Աշխարհի պատանեկան առաջնություն	2	7	-	1	2	3
8	Աշխարհի գավաթի առաջնություն	2	5	1	1	1	3
9	Բանակայինների աշխարհի առաջնություն	2	5	1	-	2	3

10	Համաշխարհային գիմնազիադա	1	3	1	1	-	2
11	Եվրոպայի առաջնություն	6	18	6	3	6	15
12	Եվրոպայի U 23 առաջնություն	3	9	3	1	1	5
13	Եվրոպայի երիտասարդական առաջնություն	5	14	6	6	3	15
14	Եվրոպայի պատանեկան առաջնություն	9	17	1	3	5	9
15	Եվրոպայի U 15 առաջնություն	3	8	-	-	4	4
16	Եվրոպայի փոքր երկրների առաջնություն	1	5	1	1	-	2
	Ընդամենը	48	126	22	19	29	70
17	Ծանրամարտ ԱԱ՝ առանձին վարժաձևեր	-	-	2	3	3	8
18	Ծանրամարտ ԵԱ՝ առանձին վարժաձևեր	-	-	15	7	6	28
19	Ծանրամարտ ԱԳ՝ առանձին վարժաձևեր	-	-	2	-	1	3
	Ընդամենը	-	-	19	10	10	39
	ԸՆԴԱՄԵՆԸ	48	126	41	29	39	109

Ծանոթություն. Մեդալների ընդհանուր թվից 25-ը, այդ թվում 12՝ոսկի, 7՝արծաթ և 6՝ բրոնզ նվաճել են ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոցի ծանրորդները:

- **Հայաստանի Հանրապետության սպորտի ոլորտի 2024 թվականի լավագույնների 9-ը անվանակարգերից 5-ում՝ լավագույնը Շիրակի մարզի ներկայացուցիչներն են:**

N	Անվանակարգը	Լավագույնները
1	**«Լավագույն 3 մարզիկներ»**	ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ-*Շիրակ* *հունահռոմեական ըմբշամարտ* ԴԱՎԹՅԱՆ ԱՐԹՈՒՐ *սպորտային մարմնամարզություն* ԼԱԼԱՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ-*Շիրակ* *ծանրամարտ*
2	**«Լավագույն կին մարզիկ»**	ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱ-*Շիրակ* *ծանրամարտ*
3	**«Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ»**	ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳՐԵՏԱ-*Շիրակ* *պարաձանրամարտ*

4	**« Լավագույն թիմ»**	**ՇԱԽՄԱՏԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ**
5	**«Լավագույն երիտասարդ մարզիկ»**	**ՊՈՂՈՍՅԱՆ ԷՄՄԱ-*Շիրակ*** ***ծանրամարտ***
6	**«Վերադարձ մեծ սպորտ և/կամ հայտնություն»**	**ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ ՀՌԻՓՍԻՄԵ** ***ծանրամարտ***
7	**«Հայաստանի Հանրապետությունը լավագույնս հանրահռչակած մարզիկ»**	**ՄԽԻԹԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԽ** ***ֆուտբոլ***
8	**«Լավագույն մարզիչ»**	**ՍԵՐՈԲՅԱՆ ՀԱԿՈԲ** ***սպորտային մարմնամարզություն***
9	**«Հանդիսատեսի համակրանք»**	**ԼԱԼԱՅԱՆ ՎԱՐԱԶԴԱՏ-*Շիրակ*** ***ծանրամարտ***

Ծանոթություն՝ Լավագուններ ճանաչված Ալեքսանդրա Գրիգորյանը և Էմմա Պողոսյանը ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոցի սաներ են:

- Կազմակերպվել է 2024 թվականին կամավոր ատեստավորում անցած մարզական ՀՈԱԿ-ների թվով 8 մարզիչ-մանկավարժների՝ ՀՀ պետական բյուջեից հավելավճարի ստացման
  գործընթացը:

❖ Նյութատեխնիկական բազաների շարունակական արդիականացման, ժամանակակից մարզագույքով հագեցվածության ապահովման նպատակով՝ ՀՀ կառավարության 2024 թվականի մայիսի 23-ի N 769 - Ա որոշմամբ Շիրակի մարզում գործող ՀՀ ԿԳՄՍ նախարարության, ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի և համայնքապետարանների ենթակայությամբ գործող 25 մարզադպրոցների անհատույց սեփականության իրավունքով հատկացվել է 50.457.000 դրամի մարզագույք.

Աղյուսակ N 4՝ Մարզադպրոցներին մարզագույքի բաշխում

N	Մարզադպրոցը	Գումարը /ՀՀ դրամ/
1	ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու Իսրայել Միլիտոսյանի անվան ծանրամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ	650.000
2	ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ	1.335.000
3	ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու Լյուդվիգ Մնացականյանի անվան ձմեռային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ	5.944.000

4	ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու մանկապատանեկան համալիր մարզադպրոց» ՊՈԱԿ	10.983.000
5	ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու աթլետիկայի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց» ՊՈԱԿ	2.560.000
6	ՀՀ ՇՄԱ «Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոց» ՊՈԱԿ	2.816.600
7	Գյումրի համայնքի «Ալեքսան Հակոբյանի անվան թենիսի և սեղանի թենիսի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	1.434.000
8	Գյումրի համայնքի «Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	1.320.000
9	Գյումրի համայնքի «Սամբո-ձյուդոյի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	2.290.000
10	Գյումրի համայնքի «Մարմնամարզական մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	650.000
11	Գյումրի համայնքի «Հրաձգության մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	360.600
12	Գյումրի համայնքի «Արթուր Ալեքսանյանի անվան հունա-հռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	3.441.200
13	Գյումրի համայնքի «Համալիր մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	348.000
14	Գյումրի համայնքի «Աթլետիկայի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	2.248.000
15	Գյումրի համայնքի «Բռնցքամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	2.785.000
16	Գյումրի համայնքի «Արամ Սարգսյանի անվան խաղերի մակապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	1.590.000
17	Գյումրի համայնքի «Շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	1.260.000
18	Գյումրի համայնքի «Պարի և սպորտային պարերի մասնագիտացված մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	294.000
19	Գյումրի համայնքի «Ազատ ոճի ըմբշամարտի մարզադպրոց» ՀՈԱԿ	344.000
20	Արթիկ համայնքի «Արթիկի ֆուտբոլի մարզադպրոց» ՀՈԱԿ	708.000
21	Արթիկ համայնքի «Արթիկի մարզահամալիր» ՀՈԱԿ	47.700
22	Արթիկ համայնքի «Արթիկի մարզադպրոց» ՀՈԱԿ	1.383.000
23	Անի համայնքի «Մարալիկի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	1.007.000
24	Ախուրյան համայնքի «Ախուրյանի համալիր մարզադպրոց» ՀՈԱԿ	3.116.000
25	Ամասիա համայնքի «Ամասիայի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ	1.542.000

- ՀՀ Շիրակի մարզում գործող 158 հանրակրթական ուսումնական հաստատություններին հատկացվել է ընդհանուր թվով 532 հեծանիվ:

- ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոցում ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվել են շինարարական-վերանորոգման աշխատանքներ: